

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 45/11

Քաղ. Երևան

17 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Ի. Ղարիբջանյան (քարտուղար) Ա. Հ. Աբգարյան իր 2011թ. հոկտեմբերի 17-ի նիստում քննարկեց «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի կողմից 2011թ. հուլիսի 18-ին ներկայացված «ՀԱՅԱՐԱՏ» (N20100389) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսանում «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ ֕րենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» (այսուհետ կարգ) 106.1.ա կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնիշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման ՀՀ-ում նույնատիպ ապրանքների համար գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան «ՀԱՄԱՌԱՏ» (նշանի իրավատեր՝ Արսեն Մելիքսեթյան, Երևան, Արաբկիր 51 փող., շենք 3, բն 54, 1Տ1 16485) ավելի վաղ ապրանքային նշանի առկայության պատճառով: Կարգի 118¹-րդ կետի համաձայն բառային նշանների նմանությունը որոշելիս գնահատվում է դրանց ձայնային (հնչյունային) նմանության հատկանիշները, այն է նշանները կազմված են մոտ և համընկնող հնչյուններից, պարունակում են միևնույն քանակով վանկեր, այսինքն ՀԱ-ՅԱ-ՐԱՏ -- ՀԱ-ՄԱ-ՌԱՏ, ունեն ընդհանուր տեսողական տպավորություն և տառերի միմյանց նկատմամբ միևնույն դասավորվածություն, ինչպես նաև գնահատվում են գրաֆիկական (տեսողական) նմանության հատկանիշները, այն է ընդհանուր տեսողական տպավորությունը, օգտագործված տառատեսակը, տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական գրելաձևը (երկու նշաններն էլ տպագիր են, մեծատառ),

այբուբենը, որի տառերով գրված է բառը (օգտագործված են հայկական և լատինական այբուբենները):

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետ և նշել է, որ հայտարկվող «ՀԱ-ՅԱ-ՐԱՏ» ապրանքային նշանը նույնական կամ նման չէ ավելի վաղ գրանցված « ՀԱ-ՄԱ-ՌԱՏ»-ին և դրանով մակնիշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ չի պարունակում:

Բողոքում նշված է նաև, որ կարգի 110-րդ կետի համաձայն ապրանքային նշանը համարվում է այլ նշանին նույնական, եթե դրանք համընկնում են իրենց բոլոր տարրերով, դրանց փոխդասավորվածությամբ, գույներով և մնացած բոլոր առանձնահատկություններով: Համեմատվող նշանները չեն համընկնում իրենց բոլոր տարրերով: Հայտարկվող ապրանքային նշանն ըստ էության առանձնանում է իր ամբողջականության մեջ և չկա նույնական կամ շփոթելու աստիճան նմանություն գրանցված ապրանքային նշանի հետ:

Բողոքարկողը նշել է, որ «ՀԱՅԱՐԱՏ» ապրանքային նշանը մտացածին բարդ բառ է, բաղկացած հայ և արատ բառերից: Ապրանքային նշանի գրանցման հայտում ապրանքային նշանի նկարագրությունը գրվել էր «Անվանատառերի սկզբնատառերը (Հայկ, Արա, Տիգրան)»:

Նշանի նկարագրության ճիշտ բացատրությունը չի գրվել, քանի որ այն համարվում էր ընկերության առևտրային գաղտնիքը: Ըստ էության բառը, որպես ապրանքային նշան մարքեթինգի առումով հիմնվել է անարատ բառի վրա: Սղելով «ան» նախածանցը և փոխարենը ավելացնելով հայ բառը, դրանով ապրանքային նշանին տրվել է նոր իմաստ, այն է անարատ մաքուր նշանակում է հայարատ:

Հիմք ընդունելով Կարգի 111-րդ, 114-րդ, 117-րդ, 118-րդ և 119-րդ կետերը, բողոքարկողը անցկացրել է զուգահեռներ գրանցված և մերժված ապրանքային նշանների միջև և առաջնորդվելով Օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ մասով, խնդրել է վերանայել ապրանքային նշանների բաժնի փորձաքննությունների որոշումները և գրանցել «ՀԱՅԱՐԱՏ» (N20100389) բառային ապրանքային նշանը հայտարկվող բոլոր ապրանքների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. հուլիսի 18-ին ՀՀ «Ոսկեվազի գինու գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «ՀԱՅԱՐԱՏ» (N20100389) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու կարգի» 106.1.ա կետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնիշվող ապրանքների և

(կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ գրանցված «ՀԱՄԱՌԱՏ» ապրանքային նշանին զուգորդվելը:

Կոլեգիայի կողմից նշվեց, որ բողոքում նշված զուգահեռները գրանցված և հայտարկվող ապրանքային նշանների միջև համոզիչ չեն և գտնում է, որ ապրանքային նշանի գրանցումը մերժվել է օրինական հիմքերով:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «Ոսկեվազի գինու գործարան» ընկերության բողոքը և «ՀԱՅԱՐԱՏ» (N20100389) բառային ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան